



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
Գլխավոր տնօրեն  
Կ. Հարությունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 04/24

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ

ԵՎ

ԿԱՊԱԼԱՌՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

16.03.2016 թ.  
թ. Երևան

11:00

Անցկացման վայրը՝

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ Գլխամասային գրասենյակ

*Մասնակցեցին.*

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանը

Գլխավոր տնօրենի տեղակալ, Տեխնիկական տնօրեն Դ. Գրիգորյանը

Գլխավոր տնօրենի տեղակալ, Ընդհանուր հարցերով տնօրեն Ս. Պողոսյանը

Գլխավոր տնօրենի տեղակալ, Անվտանգության և վերահսկողության տնօրեն Կ. Հայրապետյանը

Գլխավոր հաշվապահ Ն. Աղամյանը

Անվտանգության և վերահսկողության տնօրենի տեղակալ Վ. Բուռնազյանը

Ընդհանուր հարցերով տնօրենի տեղակալ Հ. Գասպարյանը

Իրավաբանական վարչության պետ Է. Ղազարյանը

Գլխավոր հաշվապահի տեղակալ Հ. Գալստյանը

Էլեկտրացանցերի հեռանկարային գարգացման, նախագծային աշխատանքների և նոր սպառողների միացման գծով դեպարտամենտի պետի Ժ.Ա. Ա.Հարությունյանը

Շինարարական բաժնի պետ Ա. Ասլանյանը

Ընկերության շինարարական ստորաբաժանման, առանձնացված տնօրինությունների և մասնաճյուղերի ներկայացուցիչներ,

Շինարարական կազմակերպությունների ներկայացուցիչներ

## ՕՐԱԿԱՐԳ

- Կապալառու կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների որակին և կատարման ժամկետներին ներկայացվող պահանջներ
- Լրացուցիչ համաձայնագրերի կնքում
- Ընկերությունում սուպերվայզերների ինստիտուտի ներդնում
- Այլ հարցեր

## ՀՄԵՅԻՆ

### Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանին

- “Հայաստանի էլեկտրական ցանցեր” ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) կապալառու շինարարական կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների որակը Ընկերության կողմից գնահատվել է անբավարար: Այս պատճառով սկսած 16.03.2016 թվականից Ընկերությունը և կապալառու շինարարական կազմակերպությունները արձանագրում են, որ պարտադիր է համարվում բոլոր շինարարական կապալառու կազմակերպությունների հետ լրացուցիչ համաձայնագրերի կնքումը, որտեղ կամրագրվեն համագործակցության հետևյալ պայմանները:
  - Շինարարական աշխատանքների կատարման պարագայում որակի կամ ժամկետների յուրաքանչյուր խախտման դեպքում կապալառու կազմակերպությունը վճարում է Ընկերությանը տուգանք 300 000 դրամի չափով, կատարման ժամկետների խախտման յուրաքանչյուր օրվա համար՝ 0.05 տոկոսի չափով տույժ:
  - Պայմանագրով նախատեսված վճարումների ուշացման համար Ընկերությունը վճարում է կապալառու կազմակերպություններին տուգանք 300 000 դրամի չափով և վճարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար 0.05 տոկոսի չափով տույժ:

2. Կապալառու կազմակերպությունների հետ կնքվող բոլոր նոր պայմանագրերի անբաժանելի մաս է համարվում աշխատանքների փուլերի կատարման երկողմ հաստատված ժամանակացույցը:
3. Պարտադիր է համարվում բոլոր կապալառու շինարարական կազմակերպությունների հետ 01.03.2016 թ. կամ 01.04.2016 թ. դրությամբ փոխադարձ հաշվարկների ակտերի կնքումը:
4. Կապալառու կազմակերպությունների և Ընկերության սեփական ուժերով կատարվող աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պարտադիր ապահովել և պահպանել աշխատանքին ներկայացվող նորմերը թե քաղաքային, թե գյուղական վայրերում:
5. Այսուհետ կապալառու շինարարական կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների փաստաթղթավորումը կատարվելու է պատվիրատու ստորաբաժանման կողմից՝ շրջանցելով մասնաճյուղերը:
6. Պարտադիր է համարվում նաև աշխատանքների կատարման օպտիմալ տարրերակների ընտրությունը:
7. Ընկերությունում ներդրվում է սուպերվայզերների ինստիտուտ, որոնք որ պատասխանատու են կապալառուների և Ընկերության սեփական ուժերով իրականացվող աշխատանքների կատարման որակի, ժամկետների պահպանման և հետավարտական երաշխիքների համար:
8. Կատարողական ակտերի լրացման ժամանակ պարտադիր են համարվում երկրորդային հումքի ձևակերպումները:

**Գլխավոր տնօրենի տեղակալ, տեխնիկական տնօրեն Դ. Գրիգորյանին՝**

1. Ընկերության հետ համագործակցող բոլոր շինարարական ընկերությունների և Ընկերության սեփական ուժերով իրականացվող ՀՀ կառավարության որոշմամբ կանոնակարգվող շինարարական աշխատանքներում պարտադիր է համարվում հետևյալ պահանջների պահպանումը.
  - 1.1. անհրաժեշտ է ցանկապատմամբ առանձնացնել շինմոնտաժային աշխատանքների իրականացման վայրի սահմանները, որի արդյունքում պետք է բացառվի մարդկանց և տրանսպորտային միջոցների մուտքը աշխատանքային գոտի (ցանկապատման տեսակը որոշվում է ելնելով իրականացվող աշխատանքի բնույթից):
  - 1.2. անհրաժեշտ է փակցնել ցուցանակներ, որոնցում պետք է նշված լինեն պատվիրատու և կապալառու կազմակերպությունների անվանումները և կոնտակտային հեռախոսահամարները,
  - 1.3. աշխատանքների իրականացման ընթացքում գոյացած շինարարական աղբի տեղափոխումը պետք է իրականացվի անհապաղ:
  - 1.4. աշխատանքների ավարտից հետո բարեկարգման աշխատանքների արդյունքում անհրաժեշտ է տվյալ տարածքը բերել իր նախկին տեսքին:
2. Շինարարական աշխատանքներն իրականացնող անձնակազմի նկատմամբ ներկայացվում են հետևյալ պահանջները.
  - 2.1. իրականացվող աշխատանքների ռիսկայնության աստիճանով պայմանավորված,

աշխատակիցները համաձայն տեխնիկական կանոնակարգի պետք է անցնեն հրահանգավորման և ուսուցման գործառույթներ,

- 2.2. աշխատանքներն իրականացնող անձնակազմը պետք է կրի համապատասխան լուսարձակող արտահագուստ՝ տվյալ կազմակերպության լոգոտիպով, կոշիկ, պաշտպանության սաղավարտ, ակնոց, ձեռնոց,
- 2.3. քաղաքներում իրականացվող շինունտաժային աշխատանքների դեպքում անհրաժեշտ է տեղադրել համապատասխան ճանապարհային երթևեկության նշանները,
- 2.4. աշխատանքները պետք է իրագործվեն օգտագործելով որակյալ գործիքներ և տեխնիկա՝ համաձայն գոյություն ունեցող կանոնակարգերի:

### **ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՅ**

1. Տեխնիկական տնօրեն Դ. Գրիգորյանին՝ սահմանել խիստ վերահսկողություն Ընկերության կողմից պատվիրված յուրաքանչյուր շինարարական աշխատանքի օպտիմալ տարրերակով կատարման նկատմամբ:
2. Ընդհանուր հարցերով տնօրենի տեղակալ Հ. Գասպարյանին և Իրավաբանական վարչության պետ Է. Ղազարյանին՝ նախատեսել և ներառել Ընկերության կողմից կնքվող բոլոր կապալի պայմանագրերում աշխատանքների կատարման փուլերի երկկողմ հաստատված ժամանակացույցերը:
3. Գլխավոր հաշվապահ Ն. Աղամյանին՝ բացառել Ընկերության կողմից որևէ շինարարական կազմակերպության վճարման ուշացումները:

Կատարող՝ Դ. Մանուկյան

Հեռ. 59 12 59